ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՄԱՍԻՍ
«27»«12»«2012թ.»
թիվ« 9»-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ _ Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մասիս գյուղական համայնքի 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

կողմ - 7, ձեռնպահ – 0 , դեմ – 0

Ավագանու անդամներ՝

Գ.Մելքոնյան
Գ.Ղազարյան
Վ.Օհանյան
Գ.Խաչատրյան
Կ.Մարգարյան
Ս.Սարգսյան
Ն.Մխիթարյան

Համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

Հավելված
Մասիս համայնքի
ավագանու 25.12.2012թ.
N9 որոշման

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ - Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ :

Տեղական տուրքեր

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված Ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների) , ինչպես նաև մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/դրամ:

2) սույն կետի « 1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201 –ից մինչև 5000քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 30000/երեսուն հազար/ դրամ
բ) 501 – ից մինչև 1000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 50000 /հիսուն հազար/դրամ
գ) 1001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 70000 /յոթանասուն հազար/ դրամ:

Ոչ հիմնական շինությունների
տեղադրման համար

3) մինչև 20 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 3000/երեք հազար/ դրամ

4) 20 և ավելի քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 5000 /հինգ հազար/ դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման աշխատանքների (բացառությամբ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի համար), եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար/դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի թույլտվության համար , հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000/հինգ հազար / դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 /հինգ հազար/դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար , յուրաքանչյուր օրվա համար՝ 350/ երեք հարյուր հիսուն /դրամ :

2) հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար՝ 150000 դրամ :

6. Համայնքի տարածքում խաղատները հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները (սաունաները) , զվարճանքի օբյեկտները ժամը 24 .00 –ից հետո աշխատելու թույլտվություն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000/վաթսուն հազար/ դրամ
3) բաղնիքների , սաունաների համար՝ 300000 /երեք հարյուր հազար/դրամ
4) խաղատների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/դրամ
5) շահումներով խաղերի կազամակերպման համար՝ 300000 /երեք հարյուր հազար/դրամ

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000/ մեկ հարյուր հազար/ դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 /մեկ հազար/դրամ :

2. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու, վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական և տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնքակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000/հինգ հազար/ դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից՝ 1000 /մեկ հազար /դրամ :

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր շնչի համար ամսեկան 10/տաս/ դրամ:

Սույն որոշման 1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը :

Համայնքի ղեկավար Ս.Մարգարյան